**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ**
**ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 11.12.2023թ. հ.057 գրության՝ տեղեկացվում է, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի Նոր Նորք վարչական շրջանի ստորաբաժանման դենդրոլոգի տեղազննման արդյունքում պարզվել է, որ Նոր Նորք վարչական շրջանի Գյուլիքեխվյան 15 շենքի բակում առկա են բնակիչների կողմից ցանկապատված մի շարք հողատարածքներ, իսկ բակի տարբեր հատվածներում նաև շինաղբ և հնացած կահույքի մասեր:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Նոր Նորք վարչական շրջանի 2023թ. ծրագրերով նախատեսված բարեկարգման աշխատանքներն ավարտվել են, իսկ 2024թ. ծրագրերն արդեն կազմվել են և Գյուլիքեխվյան փողոցի հ.15 շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքները հնարավոր չէ ընդգրկել ծրագրում: Հարցին կանդրադառնան հետագա տարիների ծրագրերը կազմելիս:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**